ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ՆԱԽԱԳԻԾ

Կ-869-13.10.2015-ՍՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-154-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6.1-ին գլխի վերնագրում «6.1» թիվը փոխարինել «5.1» թվով:

Հոդված 2. Օրենքի 24-րդ հոդվածում.

1. 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունք ունի երեխայի (որի ծննդյան կապակցությամբ ծագել է ծննդյան միանվագ նպաստի իրավունքը, այսուհետ՝ նոր ծնված երեխա) ծնողը, որդեգրողը կամ խնամակալը (այսուհետ՝ ծնող): Երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում և վճարվում է, եթե ծնողը և նոր ծնված երեխան հաշվառված են Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով:»,

2. 4-րդ մասում «դիմողի» բառը փոխարինել «նոր ծնված երեխայի ծնողների» բառերով.

3. 5-րդ մասում «դիմողի մյուս երեխաների և զավակների քանակը» բառերը փոխարինել «մյուս երեխաներին և զավակներին» բառերով.

4. 6-րդ մասում «դիմողը դիմել է» բառերը փոխարինել «դիմումը ներկայացվել է» բառերով:

Հոդված 3. Օրենքի 25-րդ հոդվածում.

1. 1-ին մասում «դիմողը տարածքային կենտրոն է ներկայացնում» բառերը փոխարինել «տարածքային կենտրոն է ներկայացվում» բառերով.

2. 3-րդ մասում «դիմողի, դիմողի» բառերը փոխարինել «նոր ծնված երեխայի ծնողների» բառերով.

3. 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Տարածքային կենտրոնը մերժում է նպաստ նշանակելը, եթե նոր ծնված երեխայի ծնողը չունի երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունք կամ դիմումին կից չեն ներկայացվել անհրաժեշտ փաստաթղթերը (տվյալները):»,

4. 6-րդ մասում «դիմողից» բառը փոխարինել «նպաստը ստացողից» բառերով:

Հոդված 4. Օրենքի 7-րդ գլուխը շարադրել հետեւյալ խմբագրությամբ:

«Գ Լ Ո Ւ Խ 7

ՄԻՆՉԵՎ ԵՐԿՈՒ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՄՔԻ ՆՊԱՍՏԸ

Հոդված 27. Մինչեւ երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի իրավունքը

1. Մինչեւ երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի (այսուհետ՝ խնամքի նպաստ) իրավունք ունի երեխայի՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում (այսուհետ՝ խնամքի արձակուրդ)՝ գտնվող ծնողը, որդեգրողը կամ խնամակալը (այսուհետ՝ ծնող)՝ մինչեւ երեխայի երկու տարեկանը լրանալը:

2. Խնամքի նպաստը նշանակվում և վճարվում է, եթե ծնողը և երեխան, Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում հաշվառված են Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով:

3. Եթե ծնողը խնամքի տակ ունի մեկից ավելի մինչեւ երկու տարեկան երեխա, ապա խնամքի նպաստը նշանակվում եւ վճարվում է յուրաքանչյուր երեխայի համար:

4. Սույն օրենքի 27-րդ, 28-րդ, 28.1-ին հոդվածների դրույթները չեն տարածվում ընտանեկան ձեռնարկատիրության մեջ ներգրավված՝ վարձու աշխատող հանդիսացող ընտանիքի անդամների վրա:

5. Խնամքի նպաստ նշանակելու համար հիմք են հանդիսանում «Եկամտային հարկի եւ սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տեղեկատվական բազայի տվյալները ծնողի՝ խնամքի արձակուրդում գտնվելու վերաբերյալ: *Ծնողին վերաբերող տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն սահմանված լինելու դեպքում խնամքի նպաստ նշանակելու առանձնահատկությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:*

Հոդված 28. Խնամքի նպաստ նշանակելը եւ վճարելը

1. Խնամքի նպաստը նշանակվում եւ վճարվում է (ծնողը խնամքի նպաստ ստանալու իրավունք է ձեռք բերում) դիմումը*, ծնողի և երեխայի (երեխաների) անձը հաստատող փաստաթղթերը, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերում՝ նաև մյուս անհրաժեշտ* փաստաթղթերը տարածքային կենտրոն ներկայացվելուց հետո՝ ըստ

Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա՝ խնամքի նպաստի իրավունք ունեցող անձի Հայաստանի Հանրապետությունում հաշվառման հասցեի մասին տվյալների:

2. Խնամքի նպաստը նշանակվում է.

1) խնամքի արձակուրդը սկսելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից՝ եթե դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել են խնամքի արձակուրդը սկսելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից հետո՝ վեց ամսվա ընթացքում.

2) դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից, եթե դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել են խնամքի արձակուրդը սկսելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից վեց ամիս հետո:

3. Մեկից ավելի գործատուների մոտ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի հիման վրա վարձու աշխատանք կատարող անձին խնամքի նպաստը նշանակվում է (սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերում նշված՝ վեց ամսյա ժամկետը հաշվարկվում է) այն ամսվա 1-ից, երբ շահառուն խնամքի արձակուրդի մեջ է եղել բոլոր գործատուների մոտ:

4. Երեխայի խնամքի նպաստ ստանալու իրավունք ունեցող ծնողին հաջորդ երեխայի համար խնամքի նպաստը սույն հոդվածով սահմանված կարգով նշանակվում է (սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերում նշված՝ վեցամսյա ժամկետը հաշվարկվում է) այդ երեխայի 70 օրականը լրանալու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

5. Խնամքի նպաստը նշանակվում եւ վճարվում է մինչեւ երեխայի երկու տարին լրանալը, բայց ոչ ավելի, քան խնամքի արձակուրդը ավարտվելը կամ սույն հոդվածով սահմանված՝ խնամքի նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելը:

6. Տարածքային կենտրոնը 10 աշխատանքային օրվա ընթացքում ճշտում է ներկայացված տվյալների հավաստիությունը եւ որոշում է ընդունում՝ նշանակել խնամքի նպաստ կամ մերժել *խնամքի* նպաստի նշանակումը: Խնամքի նպաստի նշանակումը մերժելու դեպքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր ծանուցվում է ծնողին՝ նշելով մերժման պատճառը:

7. Տարածքային կենտրոնը մերժում է *խնամքի* նպաստ նշանակելը, եթե ծնողը չունի խնամքի նպաստի իրավունք կամ դիմումին կից չի ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթերը (տվյալները):

8. Յուրաքանչյուր ամսվա խնամքի նպաստը վճարվում է տվյալ ամսվա ընթացքում՝ ծնողի ընտրությամբ անկանխիկ կամ կանխիկ եղանակով:

9. Խնամքի նպաստը անկանխիկ եղանակով վճարելը խնամքի նպաստի գումարը ծնողի բանկային հաշվին փոխանցելն է:

10. Խնամքի նպաստը կանխիկ եղանակով վճարելը գումարի տրամադրումն է անձամբ ծնողին կամ նրա փոխարեն խնամքի նպաստը ստանալու՝ օրենքով այդ իրավունքն ունեցող անձին: Վերալիազորման կարգով տրված լիազորագրով *խնամքի* նպաստ չի վճարվում:

11. Խնամքի նպաստը նաեւ վճարվում է ծնողի տված եւ նոտարի վավերացրած լիազորագրով, եթե լիազորագրով խնամքի նպաստը վճարելու մասին գրավոր դիմումը եւ լիազորագիրը ներկայացվում են տարածքային բաժին:

12. Խնամքի նպաստը լիազորագրով անընդմեջ կարող է վճարվել վեց ամսից ոչ ավելի ժամանակահատվածում՝ սկսած խնամքի նպաստը լիազորագրով վճարելու ամսից, բայց ոչ ավելի, քան լիազորագրի գործողությունը դադարելը:

13. Լիազորագիրը տալու ամսվան հաջորդող վեցերորդ ամսվանից հետո խնամքի նպաստը տվյալ լիազորագրով չի վճարվում:

14. Խնամքի նպաստ նշանակելու դիմում ներառվող տվյալների կազմն ու բովանդակությունը, խնամքի նպաստ նշանակելու եւ վճարելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 28.1. Խնամքի նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելը եւ վերականգնելը, խնամքի նպաստ վճարելը դադարեցնելը եւ վերսկսելը, չվճարված *խնամքի* նպաստի գումարը վճարելը

1. Խնամքի նպաստ ստանալու իրավունքը դադարում է.

1) երեխայի երկու տարեկանը լրանալու դեպքում,

2) երեխայի՝ բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպություն ընդունվելու կամ առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կարգավիճակ ձեռք բերելու դեպքում.

3) ծնողի հետ կնքած աշխատանքային պայմանագիրը դադարելու դեպքում.

4) խնամքի արձակուրդի ժամկետը լրանալու դեպքում, իսկ եթե ծնողը աշխատում է մեկից ավելի գործատուների մոտ, ապա որեւէ գործատուի մոտ խնամքի արձակուրդի ժամկետը լրանալու դեպքում.

5) ծնողի աշխատանքի անցնելու (խնամքի արձակուրդն ավարտվելու) կամ այլ գործատուի մոտ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի հիման վրա վարձու աշխատանք կատարելու (բացառությամբ քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա աշխատանքներ կատարելու եւ ծառայություններ մատուցելու) դեպքում.

6) երեխայի եւ (կամ) ծնողի՝ Հայաստանի Հանրապետությունից անընդմեջ վեց ամիս եւ ավելի ժամկետով բացակայելու դեպքում.

7) Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների համաձայն՝ երեխայի կամ ծնողի օտարերկրյա պետության բնակության վայրի հասցեով հաշվառվելու դեպքում.

8) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող ծնողի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարելու դեպքում, իսկ եթե ծնողը օտարերկրյա քաղաքացի է կամ քաղաքացիություն չունեցող անձ է կամ փախստականի կարգավիճակ ունեցող անձ՝ Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունքի ժամկետը լրանալու դեպքում.

9) երեխայի կամ ծնողի մահվան դեպքերում:

2. Խնամքի նպաստ ստանալու իրավունքը դադարում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված համապատասխան հանգամանքն առաջանալու ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Խնամքի նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելու համար հիմք են հանդիսանում նաեւ «Եկամտային հարկի եւ սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տեղեկատվական բազայի տվյալները:

3. Խնամքի նպաստը վճարելը դադարեցվում է.

1) ծնողի՝ *խնամքի* նպաստ ստանալու իրավունքը դադարելու դեպքում՝ *խնամքի* նպաստ ստանալու իրավունքը դադարելու օրվանից.

2) *խնամքի նպաստը լիազորագրով վճարվելու դեպքում (ներկայացվել է խնամքի նպաստը լիազորագրով վճարելու դիմում)՝ լիազորագրի գործողության ժամկետը լրանալու ամսվան հաջորդող ամսվա 1-ից կամ լիազորագիրը տալու ամսվան հաջորդող վեցերորդ ամսվանից հետո՝ այդ ժամկետը լրանալու օրվան հաջորդող ամսվա 1-ից*.

3) ծնողին կամ նրա լիազորած անձին վեց ամիս անընդմեջ խնամքի նպաստ չվճարելու դեպքում՝ 6-րդ ամիսը լրանալու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

4. Խնամքի նպաստ ստանալու իրավունքը վերականգնվում է գրավոր դիմելու դեպքում՝ եթե խնամքի նպաստ ստանալու իրավունքը դադարել է սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված հիմքով՝ դադարեցնելու օրվանից՝ բայց ոչ ավելի վաղ, քան կրկին խնամքի նպաստի իրավունք ձեռք բերելու (խնամքի արձակուրդում գտնվելու) օրվանից: Բացառությամբ սույն մասով սահմանված դեպքի՝ խնամքի նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելուց հետո խնամքի նպաստ ստանալու իրավունքը չի վերականգնվում: Եթե խնամքի նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելուց հետո ծնողը ձեռք է բերում խնամքի նպաստի իրավունք, ապա այս դեպքում նոր հիմունքներով, սույն օրենքով սահմանված կարգով նշանակվում է խնամքի նպաստ:

5. Խնամքի նպաստը վճարելը վերսկսվում է.

1) խնամքի նպաստ ստանալու իրավունքը սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված հիմքով վերականգնվելու դեպքում՝ խնամքի նպաստ ստանալու իրավունքը վերականգնելու օրվանից.

2) խնամքի նպաստ վճարելը սույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ եւ 3-րդ կետերով սահմանված հիմքերով դադարեցվելու դեպքում՝ ներկայացված դիմումի հիման վրա, դիմումը ներկայացնելու հաջորդ ամսվա 1-ից: Խնամքի նպաստ ստանալու իրավունքը վերականգնվում է եւ խնամքի նպաստը վճարելը վերսկսվում է, եթե ծնողը դիմելու օրվա դրությամբ ունի խնամքի նպաստի իրավունք:

6. Չվճարված խնամքի նպաստի գումարը վճարվում է յուրաքանչյուր հաջորդ ամսվա խնամքի նպաստի գումարի հետ՝ մինչեւ սույն օրենքով սահմանված կարգով խնամքի նպաստը վճարելը դադարեցնելը: Եթե ծնողի՝ խնամքի նպաստ ստանալու իրավունքը դադարեցվել է, ապա չվճարված խնամքի նպաստը վճարվում է դիմումի հիման վրա, դիմումը ներկայացնելու օրվան նախորդող վեց ամսվա ժամանակահատվածի այն ամիսների համար, որոնց ընթացքում անձն ունեցել է խնամքի նպաստ ստանալու իրավունք՝ մինչեւ *խնամքի* նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելը:

7. Նշանակված, սակայն ծնողի մահվան պատճառով չվճարված խնամքի նպաստի գումարը վճարվում է երեխայի օրինական ներկայացուցչին (ծնողին, խնամակալին, որդեգրողին), եթե *խնամքի* նպաստը ստանալու համար երեխայի օրինական ներկայացուցիչը դիմել է ոչ ուշ, քան *խնամքի* նպաստի իրավունք ունեցող ծնողի մահվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում: Այդ ժամկետը լրանալուց հետո չվճարված *խնամքի* նպաստի գումարը վճարվում է ժառանգության վկայագիր ներկայացնող անձին:

8. Խնամքի նպաստ ստանալու իրավունքը վերականգնելու, խնամքի նպաստ վճարելը վերսկսելու եւ չվճարված խնամքի նպաստը վճարելու պայմաններն ու կարգը, անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»

Հոդված 5. *Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է 2016 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:*

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-ԻՆ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

h/h	Հեղինակ	Առաջարկությունը	Եզրակացություն
1.	Հակոբ Հակոբյան /024 ընտրատարածք/ Արմեն Մխիթարյան /077 ընտրատարածք/ Վրեժ Մարկոսյան /014 ընտրատարածք/ Ռուբեն Հովսեփյան /006 ընտրատարածք/	1. Հանել խնամքի նպաստ նշանակելու համար ծնողի և երեխայի՝ համատեղ նույն հաշվառման վայրում հաշվառված լինելու պահանջը՝ հնարավորին պարզեցնելով նպաստի նշանակման և վճարման ընթացակարգերը:	Ընդունվել է: Նախագծի 2-րդ (ներկայացված տարբերակում՝ 4-րդ) հոդվածով առաջարկվող՝ Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրվել է նոր խմբագրությամբ, որի համաձայն՝ խնամքի նպաստը նշանակվում և վճարվում է, եթե ծնողը և երեխան, Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում հաշվառված են Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով (**հանվել է նույն հասցեով հաշվառված լինելու պահանջը**):
2.	Հակոբ Հակոբյան /024 ընտրատարածք/ Արմեն Մխիթարյան /077 ընտրատարածք/ Վրեժ Մարկոսյան /014 ընտրատարածք/ Ռուբեն Հովսեփյան /006 ընտրատարածք/	2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ զինծառայողներին և նրանց հավասարեցված անձանց անձնավորված տվյալները բացակայում են եկամտային հարկի եւ սոցիալական վճարի անձնավորված հաշվառման համակարգում՝ առաջարկում եմ նախագծով առաջարկվող՝ Օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մասը լրացնել զինծառայողներին և նրանց հավասարեցված անձանց, փրկարար ծառայության ծառայողներին խնամքի նպաստ նշանակելու առանձնահատկություններ սահմանելու վերաբերյալ դրույթներով:	Ընդունվել է: Նախագծի 2-րդ (ներկայացված տարբերակում՝ 4-րդ) հոդվածով առաջարկվող՝ Օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մասը լրացվել է հետևյալ նախադասությամբ. **«Ծնողին վերաբերող տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն սահմանված լինելու դեպքում խնամքի նպաստ նշանակելու առանձնահատկությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:**
3.	Հակոբ Հակոբյան /024 ընտրատարածք/ Արմեն Մխիթարյան /077 ընտրատարածք/ Վրեժ Մարկոսյան /014 ընտրատարածք/	3. Նախագծով առաջարկվող՝ Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասում սահմանել խնամքի նպաստ նշանակելու համար անհրաժեշտ հիմնական փաստաթղթերը (ծնողի և երեխայի անձը հաստատող փաստաթղթերը)՝ Հայաստանի Հանրապետության	Ընդունվել է: Նախագծի 2-րդ (ներկայացված տարբերակում՝ 4-րդ) հոդվածով առաջարկվող՝ Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասում **«և անհրաժեշտ»** բառերը փոխարինել **«ծնողի և երեխայի (երեխաների) անձը հաստատող փաստաթղթերը, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերում՝ նաև մյուս անհրաժեշտ»**

h/h	Հեղինակ	Առաջարկությունը	Եզրակացություն
	Ռուբեն Հովսեփյան /006 ընտրատարածք/	կառավարությանը լիազորելով սահմանել այն դեպքերը, երբ խնամքի նպաստ նշանակելու համար անձը ներկայացնում է անհրաժեշտ այլ փաստաթղթեր:	բառերով:
4.	Հակոբ Հակոբյան /024 ընտրատարածք/ Արմեն Մխիթարյան /077 ընտրատարածք/ Վրեժ Մարկոսյան /014 ընտրատարածք/ Ռուբեն Հովսեփյան /006 ընտրատարածք/	4. Հանել նախագծով առաջարկվող՝ Օրենքի 28.1-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված խնամքի նպաստի իրավունքը դադարեցնելու հիմքը (երբ ծնողը եւ երեխան հաշվառվում են բնակության տարբեր վայրերի հասցեներով):	Ընդունվել է: Նախագծի 2-րդ (ներկայացված տարբերակում՝ 4-րդ) հոդվածով առաջարկվող՝ Օրենքի 28.1-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը հանվել է (բնակության տարբեր վայրերի հասցեներով հաշվառվելու դեպքում նպաստի իրավունքը չի դադարեցվի): Ըստ այդմ, 8-րդ, 9-րդ և 10-րդ կետերը համապատասխանաբար դարձել են 7-րդ, 8-րդ և 9-րդ կետեր:
5.	Հակոբ Հակոբյան /024 ընտրատարածք/ Արմեն Մխիթարյան /077 ընտրատարածք/ Վրեժ Մարկոսյան /014 ընտրատարածք/ Ռուբեն Հովսեփյան /006 ընտրատարածք/	5. Պարզեցնել նախագծով առաջարկվող՝ Օրենքի 28.1-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի ձևակերպումները:	Ընդունվել է: Նախագծով առաջարկվող՝ Օրենքի 28.1-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «2) խնամքի նպաստը լիազորագրով վճարվելու դեպքում (ներկայացվել է խնամքի նպաստը լիազորագրով վճարելու դիմում)՝ լիազորագրի գործողության ժամկետը լրանալու ամսվան հաջորդող ամսվա 1-ից կամ լիազորագիրը տալու ամսվան հաջորդող վեցերորդ ամսվանից հետո՝ այդ ժամկետը լրանալու օրվան հաջորդող ամսվա 1-ից.»:
6.	Հակոբ Հակոբյան /024 ընտրատարածք/ Արմեն Մխիթարյան /077 ընտրատարածք/ Վրեժ Մարկոսյան /014 ընտրատարածք/ Ռուբեն Հովսեփյան /006 ընտրատարածք/	6. Խմբագրել նախագծով առաջարկվող՝ Օրենքի 28-րդ և 28.1-րդ հոդվածների առանձին դրույթներ՝ «նպաստ» բառերի բոլոր հոլովաձևերը փոխարինել «խնամքի նպաստ» բառերի համապատասխան հոլովաձևերով:	Ընդունվել է: Նախագծով առաջարկվող՝ Օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ և 10-րդ մասերում, 28.1-րդ հոդվածի վերնագրում, 3-րդ մասի 1-ին կետում, 6-րդ և 7-րդ մասերում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

h/h	Հեղինակ	Առաջարկությունը	Եզրակացություն
7.	Հակոբ Հակոբյան /024 ընտրատարածք/ Արմեն Մխիթարյան /077 ընտրատարածք/ Վրեժ Մարկոսյան /014 ընտրատարածք/ Ռուբեն Հովսեփյան /006 ընտրատարածք/	7. Առաջարկվում է նաև վերանայել երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակման կարգը՝ պարզեցնելով այն: Մասնավորապես, առաջարկում ենք. 1) Հանել երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու համար ծնողի և նոր ծնված երեխայի՝ համատեղ նույն հաշվառման վայրում հաշվառված լինելու պահանջը, 2) Պարզեցնել նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելու կարգը՝ նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելիս հաշվի առնելով նոր ծնված երեխայի մորից սերված երեխաներին՝ անկախ համատեղ բնակվելու հանգամանքից: Հանել Երեխայի ծննդյան միանվագ նպաստի համար անձամբ դիմելու պահանջը:	Ընդունվել է: Մասնավորապես, նախագիծը լրացվել է Օրենքի՝ երեխայի ծննդյան միանվագ նպաստին վերաբերող դրույթներում փոփոխություններ նախատեսող՝ հետևյալ բովանդակությամբ 2-րդ և 3-րդ հոդվածներով. ***Հոդված 2.*** *Օրենքի 24-րդ հոդվածում.* *5. 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.* *«1. Երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունք ունի երեխայի (որի ծննդյան կապակցությամբ ծագել է ծննդյան միանվագ նպաստի իրավունքը, այսուհետ՝ նոր ծնված երեխա) ծնողը, որդեգրողը կամ խնամակալը (այսուհետ՝ ծնող): Երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում և վճարվում է, եթե ծնողը և նոր ծնված երեխան հաշվառված են Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով:»,* *6. 4-րդ մասում «դիմողի» բառը փոխարինել «նոր ծնված երեխայի ծնողների» բառերով.* *7. 5-րդ մասում «դիմողի մյուս երեխաների և զավակների քանակը» բառերը փոխարինել «մյուս երեխաներին և զավակներին» բառերով.* *8. 6-րդ մասում «դիմողը դիմել է» բառերը փոխարինել «դիմումը ներկայացվել է» բառերով.* ***Հոդված 3.*** *Օրենքի 25-րդ հոդվածում.* *5. 1-ին մասում «դիմողը տարածքային կենտրոն է ներկայացնում» բառերը փոխարինել «տարածքային կենտրոն է ներկայացվում» բառերով.* *6. 3-րդ մասում հանել «դիմողի, դիմողի» բառերը* *7. 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.* *«5. Տարածքային կենտրոնը մերժում է նպաստ նշանակելը, եթե նոր ծնված երեխայի ծնողը չունի երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունք կամ դիմումին կից չեն ներկայացվել անհրաժեշտ փաստաթղթերը (տվյալները):»,* *8. 6-րդ մասում «դիմողից» բառը փոխարինել «նպաստը ստացողից» բառերով:* *Միաժամանակ, փոխվել է նախագծի հոդվածների համարակալումը:*

h/h	Հեղինակ	Առաջարկությունը	Եզրակացություն
8.	Հակոբ Հակոբյան /024 ընտրատարածք/ Էլինար Վարդանյան /087 ընտրատարածք/	8. Առաջարկում ենք Օրենքի Հոդված 28.1-ի 1-ին մասի 3-րդ կետը խմբագրել հետևյալ կերպ. «3) ծնողի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը դադարելու դեպքում, բացառությամբ ՀՀ աշխատանաքային օրենսգրքի 113-րդ հոդված 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված դեպքերի.»:	Չի ընդունվել: Առաջարկությունը չի բխում խնամքի նպաստի էությունից և բովանդակությունից:: Երեխայի խնամքի նպաստը տրվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձին՝ որպես խնամքի (չվճարվող) արձակուրդում գտնվելու հետևանքով կորցրած եկամտի փոխհատուցում: Այսինքն, խնամքի նպաստը աշխատող՝ երեխա խնամող մայրերին տրված լրացուցիչ սոցիալական երաշխիք է: Վերը նշված մոտեցման համատեքստում ակնհայտ է, որ խնամքի նպաստի իրավունք ունենալու համար պարտադիր պայման է գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելը (աշխատելու և եկամուտներ ստանալու հնարավորությունը): Եթե լուծվում է խնամքի նպաստ ստացող անձի աշխատանքային պայմանագիրը (անկախ պատճառից), ապա կորցրած եկամտի, հետևաբար՝ կորցրած եկամտի փոխհատուցման մասին խոսք գնալ չի կարող: Առաջարկությունը նաև կարող է առաջացնել ռիսկեր (օրինակ՝ անհատ ձեռնարկառտերը կարող է աշխատանքիւ ընդունել անձին և լուծարվել):
9.	ՀՀ կառավարության	9. Խմբագրել (պարզեցնել) նախագծով առաջարկվող՝ 28.1-րդ հոդվածի 8-րդ մասի ձևակերպումները:	Ընդունվել է: Նախագծով առաջարկվող՝ 28.1-րդ հոդվածի 8-րդ մասը շարադրվել է նոր խմբագրությամբ:
10.	ՀՀ կառավարության	10. Նախագծի 3-րդ (ներկայացված տարբերակում՝ 5-րդ) հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է 2016 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:»:	Ընդունվել է: Ձևակերպումը հնարավորություն կտա մինչև 2016 թվականի հունվարի 1-ը հաստատել համապատասխան ենթաօրենսդրական ակտերը և կիրարկել դրանք՝ սկսած 2016 թվականի հունվարի 1-ից: